# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 1/232/1 - 24

<<25>> դեկտեմբերի 2024թ — ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն նախագծային փործաքննությունը դիտարկելով ՀՀ Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների Քարավանատան Սելիմի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Նախահաշվային արժեքը կազմում է՝ **502 619.56** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:

Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<u>ՀՀ Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների Քարավանատան Սելիմի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթեր</u>

*Պատվիրատու՝ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

*Նախագծող՝ «ՎԱՍԱՐՏ» ՍՊԸ*

*Տնօրեն՝ Կ.ՎԱՍԻԼՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Վայոց Ձորի մարզ, Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի Օրբելյանների Քարավանատան Սելիմի նորոգման, ամրակայման, վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ բետոնե օդափոխիչ խրամուղու կառուցմում, երկաթբետոնե հատակի կողավոր սալի կառուցում, հարթեցնող շերտի իրականացում ցանցով, բետոնե ջրահեռացման վաքի իրականացում: Խամքարաբետոնե հենապատի կառուցում, մուտքի բարավորների ուժեղացման աշխատանքների իրականացում: Հողային աշխատանքների կատարում, պատերի սրբատաշ հատվածների նոր տաշ ու շարի իրականացում, պատերի սրսկում բարդ շաղախով, քիվերի վերաշարում և նոր տաշ ու շարի իրականացում: Ծածկասալերի տեղադրում բարդ շաղախով, սալահատակի սալերի վերաշարում և նոր տաշ ու շարի իրականացում:Երկփեղք դռան պատրաստում և տեղադրում: Հենապատերի իրականացում խառը շարվածքով և գլխաթասերի

տեղադրում: Տարածքի կանաչապատման աշխատանքների իրականացում և բազալտե եզրաքարերի տեղադրում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է **502 619.56** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2272.65** և մեքենաների շահագործման ինդեքսը **3022.31**

Նյութերի արժեքն ընդունված է 2024թ. N **11** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝*** ***Ն. Սիրեկանյան***

***Փորձագետ՝*** ***Տ. Վիրաբյան***